600.0268.21.06.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

21 հունիսի 2017 թվականի №268Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №469Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2017 թվականի հունիսի 2-ին «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկարաձգել Հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Զորագետ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №469Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Զորագետ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0529 լիցենզիայով (այսուհետ՝ №0529 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը երեք տարի և վեց ամիս ժամկետով,

բ) համաձայն Ընկերության դիմումին կից ներկայացված «Զորագետ-4» փոքր հիդրոէլեկտրակայանում կատարված աշխատանքների ցանկի՝ իրականացվել են նախագծային որոշակի աշխատանքներ, հողային մասնակի չափագրումներ,

և հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված կարգը, այդ թվում՝ կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել №0529 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երեք տարի ժամկետով՝ Որոշման 2-րդ կետով հաստատված №0529 լիցենզիայի պայմաններում «2017 թվականի հունիսի 25-ը» բառերը փոխարինելով «2020 թվականի հունիսի 25-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0529 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Զորագետ-4» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Արդշինինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2013 թվականի դեկտեմբերի 5-ի №50-227 գրությամբ ներկայացված երաշխիքի համաձայն երաշխավորված յոթ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարից երեք միլիոն վեց հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել յոթ միլիոն երեք հարյուր յոթանասունհինգ հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2020 թվականի օգոստոսի 9-ը գործողության ժամկետով:

3. Ուժը կորցրած ճանաչել №0529 լիցենզիայի 9-րդ կետը:

4. №0529 լիցենզիայի պայմանների 32-րդ և 34-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«32. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածի ավարտը Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և սակագնի սահմանման հայտը՝ համաձայն էներգետիկայի բնագավառի գործունեության լիցենզավորման կարգի և շուկայի կանոնների:».

«34. Լիցենզիայի 6-րդ կետում նշված հզորության մասնակի տեղադրման դեպքում Լիցենզավորված անձն իրավունք ունի Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել այդ մասով փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ավարտը հավաստող՝ հանձնաժողովի սահմանած կարգով պահանջվող փաստաթղթերը և սակագնի սահմանման հայտը՝

համաձայն էներգետիկայի բնագավառի գործունեության լիցենզավորման կարգի և շուկայի կանոնների:»:

5. «ԱՍԻՆՏԱՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունիսի 25-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
21 հունիսի 2017թ.